Տոլմա բառի կազմությունը

Տոլմա բառը բնիկ հայերեն բառ է, ծագումը կապված է **Դիլմուն, Դալմա անունների** գաղափարական իմաստի հետ: **Տոլմա բառը կազմված է երկու արմատից՝ տոլ + մա:**

Տոլմա բառի առաջին արմատը «տոլ» արմատն է:
Տոլ եզրաբառը հայերենում ունի խաղողի ազնվական տեսակ, խաղողի կանաչ տերեւ իմաստը /Հրաչյա Աճառյան/:
Արարտա-ուրարտերեն Տոլ - Դիլլի, Դոլի, Ուդուլի բառը նշանակում է խաղողի տերեւ:

Տոլմա բառի երկրորդ «մա» կամ «մալ» արմատը հայերենում ունի տնային կաթնատու, մսատու կենդանի իմաստը, Խոյի բարբառում տնային կենդանուն ասում են «մալ»:
«Մա» արմատը բառավերջի -լ- բաղաձայնի սղումով «մալ» արմատն է:
Այսպիսով՝ տոլ +մա եզրաբառն ունի տոլ-խաղողի կանաչ տերեւ + մալի միս իմաստը, ինչպես նաեւ՝ խոհարարական տոլ-խաղողի կանաչ տերեւով եւ մալի մսից պատրաս տած ուտեստի խորհուրդը:
«+Մա» եզրաբառը հայերենում ունի նաեւ հետեւյալ իմաստները.
-ամ-մա» արմատն ունի այծ եւ ուլ իմաստը,
-ամ- ունի նաեւ մեջ իմաստը՝ աման, ամպ:

Տոլմա, դոլմա, դալմա, դոլի

Տոլմաները. Հայերեն դոլմա, տոլմա, դոլի, ուդուլի- պատրաստվում է մսային եւ բանջարեղենային հումքով՝ խաղողի կանաչ տերեւի, կաղամբի կամ բանջարի տերեւի մեջ լցոնված եւ փաթաթված: Հայաստանում մեծ տարածում ունի թոնրի տոլման: Բացառիկ է Տիգրանակերտի փըթէ-թըփէ դոլման, որը խաղողի թփով փաթաթված դոլման է, մատուցելիս վրան ավելացնում են մածուն–սխտոր:
Արարտա-ուրարտերեն՝«Ուդուլի» տոլման հայկական հնագույն ազգային ուտեստներից մեկն է: Նրա բաղադրատոմսը պահպանվել է Մատենադարանի ձեռագրերում՝ ավելի քան 1000 տարի:

Տիհանա- Ինանա Աստվածուհին եւ Երկիր Դիլման **Դիլմուն դրախտավայրը**
Շումերական մի առասպելում Ինանա Աստվածուհին ասում է.-Ես կին եմ:
Բոլոր կանայք միաձուլված են մեկ հուգու մեջ, ունեն միեւնույն հոգի, բոլորն ունեն մեկ հուզիչ հոգի: Ես Ուրուկի-Արեգի եւ Անանայի Արքայադուստր եմ: Ես ուզում եմ վերադառնալ **իմ տուն Երկիր Դիլման**: Այնտեղ հոսում են Կաթն ու Մեղրը, այնտեղ չկա հիվանդություն, չկա մահ: Առյուծը չի սպանում, գայլը չի ուտում գառներին: Մենք շատ մոտ ենք այդ Երկրին, բայց նաեւ այն Աստեղնային ճանապարհով հեռու է մեզանից:

Դիլմուն- Երեւանի Դալմայի այգիները
Զվարթնոցի տաճարի թանգարանի շենքի առջեւ տեղադրված է ուրարտական Ռուսա 2-րդ թագավորի սեպագիր արձանագրությունը(մոտ Ք. ա. 680 – 640թթ.):
Արձանագրությունը պատմում է Հրազդան-Իլդարունիա գետից Դալմայի այգիների տարածքով ջրանցքի անցկացման եւ այդ առթիվ Աստվածներին զոհեր մատուցելու մասին:
Կարինե Հայրապետյան
Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիա